

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Кавказский Вѣстникъ“, օգոստոս
և սեպտեմբերի Այս միացած համա-
րում ապագրուած է Եարբօնելի մի
հետաքրքրական լօղուածի թարգ-
մանութիւնը „Յզուիտներ ի կարգի
մուսուլմանական ծագումը“ վեր-
նագրով: Եսլամական կղերական հո-
ղի վրայ ծնունդ առած այդ հռչա-
կատը կարգը, որ ամբողջ քրիստո-
նեայ աշխարհի վրայ այնքան դա-
րեր ծանրացան և ծանրանում է,
բազմաթիւ ուսումնասիրութիւնների
նիւթ է եղել: Եստ փորձեր են ե-
ղել որոշելու համար, թէ Իզնատիոս
Լօյօլլան ո՞րտեղից փերցրեց իր
սուխի ծրագիրը, ի՞նչը նրանում
միտք ծագեցրեց տալ իր հետեւող-
ներին այդ դարհուրելի կազմակեր-
պութիւնը, որ քրիստոնէական ա-
նուանուելով հանդերձ, ամբողջ դա-
րեր թճիւրներով պղծեց եկեղեցին
և նենդութեան, դաւի, մութ ջան-
ցանքների, խաբէութեան, անբա-
րոյականութեան, բռնութեան նող-
կալի զէնք դարձաւ: Եարբօնել իր
նոր ուսումնասիրութեամբ գալիս է
այդ փորձերի թիւը մէկով աւելաց-
նելու և, պէտք է խոստովանել, հրա-
պարակ նեւտուած խնդրի բուսական
սրամիտ լուծումն է տուել:

Նրա կարծիքով Լօյօլլայի կարգի
և նրա ներքին կազմութեան, ոչու,
առաջնորդող պրինցիպների աղ-
բիւրը պիտի փնդուել մուսուլմանա-
կան կրօնական կարգերի մէջ, ո-
րոնցից շատերը գոյութիւն ունէին
եզուիտներից առաջ և արաբների
ձեռքով իրանց գաղտնի ճիւղաու-

րութիւնները տարածել էին մինչև
Սպանիա: Իր թեզն ապացուցանե-
լու համար Եարբօնելը համեմատու-
թիւններ է անում XV և XVI դա-
րերում գոյութիւն ունեցող մուսուլ-
մանական կրօնական կարգերի, նը-
րանց կազմակերպութեան, գոր-
ծունէութեան մեթոդի, նպատակի և
եզուիտների կարգի մէջ: Մուսուլ-
մանական այդ կարգերից, որոնց
մեծամասնութիւնը մինչև այժմ գո-
յութիւն ունեն, նա լիշում է երկու
նշանաւոր՝ Կադրիանի՝ Սիդ-Աբդել-
Վաղերի հիմնածր, Ասիայում, XII դա-
րում, և Եաղեյլեանի՝ Սաիդ-Աբուհա-
սէին-ել-Եաղելի հիմնածր:

Այդ կարգերի անդամները կոչ-
ւում են Սուֆի կամ Կուան (միա-
բան), ասում է Եարբօնել, և նրանք
հնազանդում էին Ուելդիին, ալախիքն
միակ կանոնադրութեանը: Նրանք
ունեն իրանց առանձին աղօթքը,
հաւատի մի տեսակ սիմվոլ, ... և հը-
պատակում են մի հատ Եէլիի, որ
կառավարում է միաբանութիւնը և
Սօկադուեմին, որ վանահայրն է:
Եարբօնել առանձին առանձին հա-
մեմատում է մուսուլմանական և
եզուիտական կարգերի կօնոնա-
դրութեան համապատասխան մա-
սերը, և գալիս է այն հետաքրքիր
եզրակացութեան որ՝

«Մուսուլմանական կարգերում
և եզուիտների մօտ մինչև գա-
լիցիւնացիա ու խելագարու-
թեան հասցնող ֆիզիկական և
բարօշական ներմուծութեան
պրոցեսսը բոլորովին նոյն է:

Մինչև իսկ մանր բաներում նմանողութիւնն ապշեցուցիչ է։ Գրիստոնէական ոչ մի միաբանութեան մէջ այսպիսի բան դժբաղդուած չէ։

Մուսուլմանական կուսանները (միաբան) ինչպէս և եզդիտները համոզուած են, որ իրանց կանոնադրքերը երկնքից են ներշնչուած կամ իջած, թէ՛ նրանք և թէ՛ միւսները աղօթքի առանձին վարժութիւններ ունին, որով իրանք իրանց հիպոթեզնում են, երկուսն էլ ունին տակտով աղօթելու սովորութիւնը։ Մուսուլման նորընծան հետընտէ երթարկում է 30—40 օր տքնութեան, ինչպէս և եզդիտ նորընծան։ Թէ՛ մէկ և թէ՛ միւս կարգերում (եզդիտ և մահմեդական) ներքին կազմակերպութեան մէջ ընդունուած է վերից վար իջնող երարխայի սխտեմը և ամբողջը կուրդէն հպատակում է պետին, որի կամքը ամբողջ կազմակերպութեան կամքն է։ մէկն իր շէյխն ունի, միւսն իր զենեարալը, եւսկ այսպիսի պրինցիպներ, ասում է Շարբօնել, եզդիտներից բացի ուրիշ ոչ մի քրիստոնէական միաբանութիւն չունի։

Երկու կարգերի և նրանց կանոնադրութեան տեքստերի համեմատութեամբ այնպիսի նմանողութիւնէ երևում, որ Շարբօնել տեղ տեղ Լօջլլայի արածը համարում է պլագիատ, իսկ նրա ամբողջ եզդիտական կարգը բացարձակ կերպով յայտարարում է մուսուլմանական, միայն մի քիչ փոփոխուած կաթոլիկ կրօնի պահանջների համեմատ։

Այս եզրակացութիւնը՝ որքան և օրիգինալ լինի ու հետաքրքիր, գուցէ շատ շատերի կողմից չափազանց համարուի, գուցէ ոմանք այլ բացատրութիւններ տան Շարբօնելի մատնացոյց արած երևութիւն։ Բայց այն ինչ որ անհերքելի է և

ապացուցուած կարելի է համարել, դա երկու հարգելի—մուսուլմանական և եզդիտական—ներքին կազմի, նպատակի, ոգու, դժբաղդութեան մեթոդի մէջ երևան եկող կատարեալ նմանութիւնն է, և դա խիստ հետաքրքիր է կարծես թէ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, թէ մէկը և թէ միւսը կրօնը դարձրի ընթացքում դարձրել են զէնք միանգամայն ոչ կրօնական նպատակների համար։

Ձեռնուածոյ աւելի մեծ փառքի համար, դէպիղը, թէ եզդիտներին և թէ մուսուլմաններին ծառայել է որպէս միջոց՝ որքան կարելի է աւելի մեծ օգուտ դուրս քաշելու իրանց վարդապետութիւնից, որ ձգտում է միացնել հոգեւոր և աշխարհական իշխանութիւնները, կրօնը, քաղաքականութիւն է և իշխել՝ զաղտնիքի և կրօնի ուսուցման ուժով խղճերի և կամքերի վրայ, իրատացի կերպով ասում է Շարբօնել։ Արդարեւ եզդիտների կազմակերպութիւնը միայն մուսուլմանական ֆանատիկ, զաղտնի կարգերին կարող էր նմանել, քանի որ դարերի ընթացքում մուսուլմանական քաղաքականութիւնը, ուր և լինէր նա, իբր հիմունք և առաջնորդող, ոգեւորող սկզբունք ունեցել է կրօնը, իսկ իբրև շարժիչ, մղիչ ուժ՝ մահմեդական կղերի զաղտնի կամ չափնի քարոզչներ։

»Մուսուլմանական կուսանները, ասում է Շարբօնել, կրօնական դործունէութեան բոլոր տակ վարում են անընդհատ քաղաքական ագիտացիա Երբեմն, որ և է շէյխի դեսպանը շրջում է մուսուլմանական նահանգները և... յայտարարում է իր պետի հրամանը—նա քարոզում է սրբազան պատերազմ։ Մի քանի կարգեր 100—150 վանքեր ունեն, ուր հանդիպում են շէյխի դեսպանին և արարութեամբ հաղորդում

են բոլոր հաստացեալներին շէյ-խի հրամանը... Այդ միաբանութիւնները նրանով աւելի վտանգաւոր են, որ գործում են զաղտնի և նրանց ազնւոնները ակօսում են Ասիան և Աֆրիկան, ռաքի հանելով ժողովուրդը առաքելութեան, մերձատրի սիրոյ, ուխտաւորութեան և կրօնատրական քանասիրութեան պատրուակով՝:

Արեւելքի բրիտանեաններին ալս պատկերը, ալս գործունէութիւնը դարերից ի վեր ծանօթ է, «Նշահաթը» անհատներին ալս ընդհանուր կոտորածը Ալլահի սիրոյ համար, ամեն օր սրի պէս կախուած է եղել միլիոնների զիւին, որոնք դուրանը չեն ձանաչել և Նազովրեցուն են հետեւել:

Նշահաթները իրանց գործունէութեամբ ինկիլիդիայով, միջոցների անխտրականութեամբ, զաղտնի քաղաքական աղիտադիպով, իրանց երարխիական կազմակերպութեամբ, կրօնի համար պաշարուղ, կոտորդ, արիւնտծարաւ տեմպերամենտով, իրանց զաղտնի ազնւոններով իրապէս դառնում են, եթէ կարելի է այսպէս ասել, «կաթիլիկ մուսուլմաններ», նոյնպէս ֆանատիկ, նոյնպէս արիւնբոտչաւ, և անողորմ, որպէս իրանց մահմեդական եղբայրները՝ նման կազմակերպութիւն և գործունէութիւն ունենալուց չեաոյ, բնական էր, որ երկու կարգերն էլ բոլորովին նման հետեւանքների հասնէին: Վուսուսա-սիրելով ժողովուրդները, ցեղերը, քաղաքականութիւնը, կրօնը, ասում է Նարթունը, որոնց կրօն անդրադարձել է մուսուսական կուսակցութիւնը և եղբայրութիւնը, ամենից առաջ աչքի է ընկնում նոյնանման ապականութիւնը, եռանդի նոյն թուութիւնը և կազմաւորութիւնը նոյն նշանը: Արեւելքը մեռած է: Ուրուգուայ և Պարագուայը մեռած են, Հարաւային Աֆրիկայի բոլոր

հանրապետութիւնները մեռած են, Կուրան և Փիլիպպին կղզիները աւերուած են, և եթէ այնտեղ առաջ չը գար ազատարար շարժում, այն ժամանակ նրանք էլ մեռած կը լինէին: Սպանիան մեռած է: Բոլոր այդ երկրները սուգիներ: ու կուսեցներ, կղերականների ու արեղանների գործունէութեան ասպարէզ են եղել: Այնտեղ շէյխերի և կրօնական կարգերի դիտաւորութիւնները վերջացել են շէյխերի և բանականների գեներալների լաղթանակով:

«C.-Петербург. Вѣд.» լրագրի մէջ տպուած է մի լուրուած ի պատառ-խան «Моск. Вѣд.» ամիղցիկը լար-ձակումներին հայերի դէմ:

Այդ անփաստ պնդումի դէմ հետեւան է գրում «C.-Петербург. Вѣд.» թերթը:

Վատաւարչապետի խորհրդում և բարձր դիւանատան մէջ 38 անձերից միայն 1 հայ գործավար կայ (օրացոյց 1901 թ.). 19 Նահանգապետներից և օգնականներից—1 օգնականը հայ է: Դադարտանի շէյխանում, որ հայերը 0,2 տոկոս են հաշուում: 116 զատապետներից և շրջանապետներից ու նրանց օգնականներից—միայն 5 են հայ: Դատաւորական վարչութեան 146 անձերից (պալատը, նահանգական զատարանները և պրօկուրատուրան)—միայն 5 են հայեր: Պետական կարուստների միլիտարութեան 90 անձերից բարձր պաշտօնեաներ միայն 10 են հայեր: Հեռաւարդ, 403 բարձր պաշտօնեաներից—հայերը 22 հոգի են կամ 5,4 տոկոս, այն ինչ նրանք կազմում են ազգաբնակչութեան մօտ 20 տոկոս: Արդեօ՛ք բաւարար պերճախօս են այդ թուանշանները:

«C.-Петербург. Вѣд.» Օգոստոսի 1-ն լոյս տեսած համարում տպուած

„Опытна литературнаго труда въ армянской литературѣ“ (Գրական աշխատանքի գնահատությունը հայոց գրականության մեջ) վերնագրով լոգոսածը, որ շոշափում է մեր գրականության զարգացման պայմաններից մեկը *)։ «Կար ժամանակ, ասում է լոգոսածագիրը, երբ գրական աշխատանքի վարձատրությունը գոյություն չուներ և մինչև անգամ համարում էր թե հասարակության, թե իրանց գրողների կողմից սրբապղծության պէս մի բան»—Սյդպիսի հայեացք գրողի աշխատանքի մասին հանդիսանում էր իրեն ուղղակի արդիւնք գրական աշխատանքի մետաֆիզիկական ըմբռնման։ Ընթերցողները, ինչպէս և իրանք գրողները, բարձր, նոյն իսկ սուրբ համարելով գրիչը, չէին կարող հռչակուել աչն մտքի հետ, որ գրչի սրբազան պտուղը կարող է գնահատության ենթարկուել արհամարհելի մետաղով... Բայց աշխարհիս վրայ ոչ մի բան լուստենական չէ։ Լուստենական չէր և այդ, թէև շատ իդէալական, բայց ըստ էության միամիտ հասկացողությունը գրական աշխատանքի մասին, ժամանակի ընթացքում տպագրական արուեստի տարածմամբ և կուլտուրայի զարգացմամբ կազմուեց գրողների դասակարգ, որ ապրում էր միայն գրչով Սյդպիսով գրական աշխատանքի զրամական գնահատությունը անհրաժեշտություն դարձաւ ներկայումս իւրաքանչիւր կրթուած ազգութիւն իւրաքանչիւր տարի տալիս է տաճնակ, գուցէ և հարիւր միլիոններ գրականագէտներին, զրանց գրչի արտագրութիւնների համար Թուսաց հասարակութիւնը այժմ այնքան ընտելացել է այդ սկզբունքի հետ,

*) Սյդ հարցերը շոշափուած են և «Մուրճում», օրինակ, 1901 թ. № 11 և այս տարուայ-№ 7 ներք. Ցետութիւնների մէջ։

նրա գործադրութեան շնորհիւ, որ զարմանքով կ'իմանայ թէ նաև XX դարի սկզբում գոյութիւն ունի մի փոքրիկ ազգի մէջ գրողների դասակարգ, որ ոչինչ չի ստանում իր աշխատանքի համար։ Սյդպիսի մի դժբախտ դասակարգ հայ գրողների դասակարգն է։

Սպա խօսելով հայոց գրականության վերածնութեան նահատակների մասին՝ այսպէս է շարունակում լոգոսածագիրը։

«Ննչպէս իւրաքանչիւր գրականութեան, այնպէս և հայոց գրականութեան ազատ զարգացման համար, անհրաժեշտ էր, որ գրողները զբաղուէին միմիայն գրելու արուեստով։ Նախ դրա համար պէտք է ապահովել նրանց գոյութիւնը լոկ գրական աշխատանքով։ Սակայն, հայոց գրականութեան կատարեալ դժբախտութիւնից, այդպէս չեղաւ. հայ գրողները դասակարգ կազմեցին միայն գաղափարական միութեամբ վերցրած, իսկ տնտեսապէս նրանք չունեն իրար մէջ ոչինչ ընդհանուր բան և մնացել են նոյն գրութեան մէջ, ինչ գրութեան մէջ գտնուած էին լիտունական թուականների նրանց նախորդները։

«Հայերը չեն հետաքրքրուած իրանց նորածին գրականութեան բախտով։ Մինչև անգամ, ամենալուստորուած հայը, արհամարհելով իր հայրենի գրականութիւնը, ինչպէս և իր սոգի բոլոր հոգեկան պահանջները, ամեն բանի վրայ բարձրից է նայում, լրագիր չի ստանում, հայերէն գրքեր չի ստանում, իսկ եթէ գտնու է հակառակ իր կամքի, չի կարգում և առնատարակ դէպի ամեն ինչ վերաբերում է տգէտ անտարբերութեամբ։ Սյդ երևութի մէջ անդրանկութիւնը պատկանում է բարձրագոյն ինտելիգենցիային, որին հետեւում են կուրորէն և հայ հասարակութեան այլ խաւերը...»

Եւ այդպէս շարունակում է ռուսաց թերթը մի շարք ճիշտ դիտողութիւններ լայտնել. դիտողութիւններ, որոնց նմանները հայերէն լեզուով շատ են գրուել, մնալով ձայն բարբառոյ լանապատիւ Արդեօք այդ անապատը—հայ հասարակութիւնը—ձայն կը տալ լսելով այդ բոլորը նախ օտար լեզուով... չենք հաւատում...

«Մօսկա». «Մամուլի միջադգային 8-րդ կօնգրէսում, որ տեղի ունեցաւ Քերնում ցրուեց հանդիսականներին մի շրջաբերական՝ հայոց մամուլի մասին,—մի համառօտ ուրուագիծ հայկական լրագրութեան՝ սկսած 1794-ից, երբ լոյս տեսաւ Կալկաթայում առաջին հայ թերթը:

Նկարագրուած է այդ մամուլի երկշտ սկզբնատրութիւնը, երբ կրօնական ոգին էր իշխում հայոց հրապարակախօսութեան մէջ և երբ հայկական լուսաւորութեան ճրագները վաւում էին ոչ թէ հայրենիքում, ուր միջնադարեան պալմանները անհնարին էին դարձնում տպագրութեան գոյութիւնը—ալլ հեռաւոր կենտրոններում՝ Վենետիկ, Պարիզ, Մօսկուա...

Նկարագրուած է երկրորդ շրջանը, երբ մամուլը մօտք է դործում բուն հայրենիքը, երբ հրապարակախօսութիւնը մօտենում է ժողովրդին, որոշ չափով արձագանք է լինում նրա ցաւերին, երբ կրօնական ոգին տեղի է տալիս աշխարհականին, Հայը ասպարէզ է գալիս իբրեւ ճշմարիտ կուլտուր—

տրեզեր և նա հիմնում է առաջին ապարանն ու թերթը Փոքր-Ասիայում (1857 թ.):

Նկարագրուած է երրորդ շրջանը—հայոց մամուլը Թիւրքահայաստանում անդամալուծուած, հայ գրողները վտարուած և թերթերի միւս մասը կենտրոնացած դարձեալ արտասահմանում...

Մի փոքրիկ վիճակագրութիւն, որ կցուած է շրջաբերականին, պարզում է այդ մամուլի անօրմալ վիճակը:

Այսօր գոյութիւն ունեն՝	
Թիւրքահայաստանում 0 հայ հրատ.	
Ռուսահայաստանում . . . 5	" "
Կ. Պօլսում . . . 5	" "
Եգիպտոսում . . . 3	" "
Յօգարիայում . . . 2	" "
Աւստրիայում . . . 1	" "
Իտալիայում . . . 1	" "
Շվեյցարիայում . . . 1	" "
Ֆրանսիայում . . . 5	" "
Անգլիայում . . . 3	" "
Ամերիկայում . . . 3	" "

Շրջաբերականը ծանրացել էր այդ անօրմալ դրութեան պատճառների վրայ. Երկու հարիւրի չափ հրապարակախօսներ զանալան երկրներէից իրանց ստորագրութիւններով բաղձացին ոչնչացնումը այն պալմաններին, որոնք արգելում են թիւրքահայ ինտելիգենցիային՝ ծաւալել իր տաղանդն ու կորովը, ստեղծել մի հզօր մամուլ, որը կոչուած կը լինի քաղաքակրթութեան կրող հանդիսանալ խաւար Արեւելքում: